

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆԶԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՈՐՊԵՍ ԹՈՒՐՔ-
ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱՄԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ*

Արևեն Զուլֆալակյան

Մերձավոր Արևելքն իր մեջ ամփոփում է աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, էթնոկրոնական և արժեքային գործոնների մի բազմաշերտ համակարգ, որը դարեր շարունակ կայուն ազդեցություն է ունեցել և այսօր էլ շարունակում է ունենալ տարածաշրջանի երկրների քաղաքական վարդի և հետապնդած շահերի վրա: Տարածաշրջանային նման բարդ ետնապատճերի ներքո ընդգծված առանձնանում են թուրքական հարաբերությունները, որոնք, իրենց մեջ ամփոփելով պատմական իրողությունների ժառանգությունը, ունեցել են տեղատվության և մակրնթացության տարբեր ժամանակահատվածներ:

Իր մեջ ամփոփելով պատմական ժամր ժառանգություն՝ թուրք-սիրիական հարաբերություններն այսօր էլ դժվար է անվանել բարիդրացիական: Հետադարձ հայացը նետելով երկու երկրների անցած ուղու և փոխհարաբերությունների պատմության վրա արձանագրենք, որ այդ հարաբերությունների հիմնաքարն ավանդաբար եղել է տարածքային հավակնությունների խնդիրը՝ մասնավորապես Ակերսանդրետի սանջակի և մի շարք այլ տարածքների պատկանելության հարցերը: Հիշեցնենք, որ նշյալ տարածքները 20-րդ դարի 30-ականների վերջին ընդգրկվել են թուրքիայի կազմում, որի հետ կապված Սիրիան մինչ օրս առարկություններ ունի: Հարկ է նշել, որ երկու պետությունների միջև տարածքային հավակնությունների շուրջ ծևավորված արդեն առնվազն մի քանի տասնամյակ ծգվող իրավիճակն իր արմատներով գնում է դեպքի պատմական անցյալ:

16-րդ դարի առաջին տասնամյակում Օսմանյան կայսրությունը Սելիմ Սիեղի գլխավորությամբ նվաճեց Հյուսիսային Իրաքը, իսկ Մարջ-Դարփի հաղթական ճակատամարտից հետո իր վերահսկողությունը հաստատեց Սիրիայում: Թուրքական վերահսկողության հաստատումից հետո Սիրիան և Պաղեստինը[1] բաժանվեցին Դամասկոսի, Հալեպի, Տրիպոլիի և Սայդայի վիլայեթների, իսկ վերջիններս իրենց հերթին՝ սանջակների*: Վարչատարածքային նմանօրինակ բաժանումը նպատակ ուներ տեղերում խիստ վերահսկողություն սահմանելու միջոցով գրկել տեղաբնակ ազգերին, մասնավորապես՝ արաբներին, սեփական պետության և պետականության կառուցման ուղղված քայլեր ծեռնարկելուց: Դա էր նաև պատճառներից մեջը, որ Օսմանյան կայսրության վերահսկողության առնվազն չորս հարյուր տարվա ընթացքում Սիրիան այդպես էլ ունակ չգտնվեց ծևավորելու քիչ թե շատ գործուն գինված ուժեր, ուստի նաև չկարողացավ սեփական անկախությանն ուղղված արդյունավետ քայլեր ծեռնարկելու: Հենց նման իրավիճակում Սիրիան «դիմավորեց» առաջին աշխարհամարտը, որի ելքը նրա հետագա ճակատագրի համար վճռորոշ եղավ:

1914թ. Օսմանյան կայսրությունը, հանդես գալով «Երյակ միության» գերմանա-ավստրիական ռազմաքաղաքական դաշինքի կազմում, իր առջև նպատակ ուներ պահպանելու և ընդայնելու ազդեցության իր գոտիներն ու տարածքները: Սակայն պատերազմի անհաջող ընթացքը և 1916թ. երկրորդ կեսից սկսած թուրքական զորք-

** Հոդվածն ընդունվել է 06.12.2014:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քերյանը:

* Սանջակ (արաբ. լիուա) - Օսմանյան կայսրության վարչատարածքային միավոր:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Դի պարտություններն Անտանտի Երկրներին բոլոր ռազմաձակատներում՝ բալկանյան, կովկասյան և արարական, փոխեցին իրավիճակը:

1916թ. մայիսին Լոնդոնում Ուուսաստանի մասնակցությամբ Անգլիայի և Ֆրանսիայի միջև ստորագրվեց Օսմանյան կայսրության բաժանման՝ Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը[2], ըստ որի՝ Անգլիան և Ֆրանսիան հաստատեցին Մերձավոր Արևելքում իրենց ազդեցության գոտիները: Ավելի ուշ՝ 1918թ. հոկտեմբերի 30-ին, Թուրքիայի վերջնական պարտությունից հետո, Մուդրուսում Կնքված գիմադադարով վերջակետ դրվեց Անտանտի և Թուրքիայի միջև ռազմական գործողություններին: Զինադադարի արդյունքում Անտանտի դաշնակից Երկրները ծեռնամուխ եղան Մերձավոր Արևելքի բաժանմանը: Բաժանման արդյունքում Սիրիան անցավ Ֆրանսիայի վերահսկողության ներքո: Վերջինիս հանձնվեցին նաև անգլիացիների կողմից գրավված Ալեքսանդրեսի սանջակը, ինչպես նաև Կիլիկիան: Պատերազմի արդյունքում Ֆրանսիայի կառավարմանը հանձնված տարածքներում ֆրանսիական ռազմական ղեկավարությունը ձեռնարկեց վարչատարածքային մի շարք վերածնումներ, որոնց արդյունքում 1918թ. նոյեմբերին 27-ին ստեղծվեց Ալեքսանդրեսի ինքնավար սանջակը [3]: Դրա մեջ մտան Հայեակի նահանգի Ալեքսանդրեսի, Անտիոքի, Բեյլանի և Հարիմի գավառները:

Անդրադաւնալով Ալեքսանդրեսի սանջակին՝ հարկ է նշել, որ որա տարածքը կազմում էր 4805 կմ² [4]: Աշխարհագրորեն այն գտնվում է Սիրիայի հյուսիսում (Հայեակից արևմուտք, Լառաքիայից հյուսիս): Սանջակի տարածքում է գտնվում Խևանդերուն (Ալեքսանդրես) նավահանգիստը, Անտիոք (Անտառիա) քաղաքը, Օրոնտես գետի հովիտը, Ամանուսի լեռնաշղթայի հարավային մասը, ինչպես նաև Մուսադաղ (Մուսա) լեռը: Ալեքսանդրեսի սանջակի նկատմամբ վերահսկողությունը ռազմավարական տեսանկյունից գերիշխողին հնարավորություն էր տալիս վերահսկելու Սիրեկրական ժողովի արևելյան հատվածը: Հարկ է նշել, որ Սանջակի ժողովրդագրական կազմը բավական բազմազան էր: Ֆրանսիական մանդատի իշխանության տվյալներով՝ 1920-ականներին սանջակում բնակվում էր մոտ 220 հազար մարդ, որոնցից 87 հազարը ազգությամբ թուրք էին: Մինչդեռ ոչ պաշտոնական տվյալներով՝ բնակչության թիվը կազմում էր մոտ 155 հազար մարդ, որոնցից 35-40%-ն էին թուրքեր: Համաձայն 1937թ. տվյալների՝ սանջակում բնակվում էր 240 հազար մարդ, որից 49%-ն արաբներ էին, 23%-ը՝ թուրքեր, 18%-ը՝ հայեր, 8%-ը՝ թուրքմեններ, իսկ 2%-ը՝ քրդեր, չերքեզներ և այլ ազգեր[5]:

Ալեքսանդրեսի սանջակի՝ որպես ինքնավար վարչատարածքային միավորի՝ ծևակորմամբ գործնականում այն ներավիանցեց միջազգային քաղաքական հարթակ՝ հետագայում դառնալով տարածաշրջանում ֆրանս-թուրք-սիրիական հակառակության հիմք, ինչպես նաև միջազգային դիվանագիտության՝ մասնավորապես Ազգերի լիգայում քննարկվող հիմնահարց:

Առաջին աշխարհամարտի տարիներին Մերձավոր Արևելքում Օսմանյան կայսրության բանակների պարտության և անգլո-ֆրանսիական ուժերի հաղթանակի գործում արաբները բավական մեծ ներդրում ունեցան, սակայն պատերազմի ավարտից հետո չստացան այն, ինչ նրանց խոստացել էին Անգլիան և Ֆրանսիան: Նշենք, որ մինչ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը Մերձավայի շերիֆ Հուսեյն Իբրահիմ Ալիի ու Կահիրենում գլխավոր հանձնակատար և Եգիպտոսի փաստացի կառավարիչ Մակ Մահմենի միջև տեղի ունեցած նամակագրության համաձայն՝ բրիտանական կողմը խոստանում էր ձանաչել արաբների անկախությունը՝ բացառությամբ Կիլիկիայի, Մերսինի և Ալեքսանդրեսի շրջանների, Լիբանանի և Սիրիայի մի մասի, որն ընկած է Հայեակի և Դա-

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

մասկոսի գծից արևմուտք, ինչպես նաև Հարավային հրաքի՝ Բաղդադից մինչև Բասրա [6]: Այս հանգամանքն առաջացրեց արաբների խոր դժգոհությունը և հետագայում «նպաստավոր հող ստեղծեց դեռևս թուրքական մեծապետական ծրագրերից չհրաժարված Մուստաֆա Քեմալի և Թուրքիայի մյուս պետական-ռազմական գործիչների վարած քաղաքականության համար»[7]:

1920թ. ապրիլի 25-ին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Սիրիայի և Լիբանանի մանդատը պաշտոնապես հանձնվեց Ֆրանսիային, իսկ սեպտեմբերի 1-ին Սիրիայում և Լիբանանում նշանակված Ֆրանսիայի բարձր կոմիսարը հաստատեց 1918թ. նոյեմբերի 27-ի ակտը, որով ստեղծվել էր Ալեքսանդրետի ինքնավար սանջակը: Զևավերված Վարչականական նոր կարգավիճակում սանջակի նոր կառավարիչները սկսեցին իշխանական ինստիտուտների ձևավորման գործընթացը: Ըստ նոր կարգի՝ Ալեքսանդրետի սանջակի իշխանական համակարգի բարձրագույն օդակը պետք է լիներ մութասարիթք*, որը պատասխանատու էր միայն բարձրագույն կոմիսարի պատվիրակի առջև: Նրա տնօրինության տակ էր Վարչական կոնժիւն, որը փաստացիորեն իրականացնում էր սեղի գործադիր մարմնի գործառույթները: Վարչատարածքային առումով Ալեքսանդրետի սանջակը պաշտոնապես մտնում էր ֆրանսիական վարչակազմի կողմից ստեղծված «Հալեբի հանրապետության» կազմի մեջ [8]:

Զնայած Սան-Ռեմոյի համաժողովի արդյունքում Ֆրանսիան ունեցավ մի շարք ձեռքբերումներ, սակայն հետագա գործընթացները ցույց տվեցին, որ նրա համար այդ պայմաններում անգամ առաջնային էր մուրքիայի հետ խաղաղության հաստատումը: Ֆրանսիացիների գգուումը սեպարատ/մասնակի խաղաղության պայմանագիր կնքելու քեմալիստների հետ դրսևովեց դեռ 1921թ. մարտի 9-ին Լոնդոնի համաժողովում, որտեղ Ֆրանսիայի վարչապետը և արտօքին գործերի նախարար Ա. Բրիանը և Անկարայի կառավարության արտօքին գործերի նախարար Բեքիր Սամի-Բեյը համաձանագիր ստորագրեցին, որի համաձայն՝ Ֆրանսիան բռնագավթել է Կիլիկիան. դրա փոխարեն Փարիզը ստանում էր Կիլիկիայում և դրանից դուրս՝ Խարբերդի, Սվագի և Դիարբերի-ի վիայերներում կոնցեսիաներ ձեռք բերելու առաջնայնություն: Համաձայն Լոնդոնի համաժողովի արդյունքների՝ հաստուկ ռեժիմ էր նախատեսված սահմանել Ալեքսանդրետի սանջակում բնակվող թուրքերի համար, որոնց պետք է տրվեր թուրքական մշակույթը շրջանում զարգացնելու հնարավորություն, մասնավորապես՝ թուրքերներ պետք է ստանար պաշտոնական լեզվի կարգավիճակի[9]: Թուրքական կողմը պայմանագրին կից առանձին նամակներով պահանջում էր նաև թուրքական դպրոցներ բացել և սանջակի հիմնականում թուրքարնակ գավառներում, նշանակել թուրք պաշտոնատարների [10]: Զնայած Լոնդոնյան համաձայնագրի մի շարք կետեր կյանքի չկոչվեցին և Ազգային մեծ ժողովի կողմից մայիսի 3-ին անվավեր ծանաչվեցին, դա չանդրադարձավ ֆրանս-թուրքական ցերմացման հետագա միտում ցույց տվող հարաբերությունների վրա [11]:

1921թ. հոկտեմբերի 20-ին կնքվեց ֆրանս-թուրքական այսպես կոչված «Ֆրանկ-լին-Բույոնիե» կամ «Անկարայի» պայմանագիրը, որի ստորագրմանը նախորդած գործընթացները փաստում էին, որ ֆրանսիական կառավարությունն ամեն գնով ցանկանում էր, ի հաշիվ մեծ ծախսեր պահանջող Կիլիկիայի, ապահովել իր վերահսկողության տակ գտնվող Սիրիայի անվտանգությունը: Պայմանագրի կազմած էր 13 կետից, որոնցից կողմերի համար առանցքային նշանակություն ունեին 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ,

* «Մութասարիֆ»- արաբերեն՝ ղեկավար, տարածաշրջանի կառավարիչ:

ՄԵՐՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍՏԱՄԱՐՄԻ ԼՐԱՏՈՒ 2015

7-րդ և 10-րդ կետերը: Դիցուք՝ առաջին կետը վերաբերում էր ռազմական գործողությունների անմիջապես դադարեցմանը, 3-րդ և 4-րդ կետերը՝ ֆրանսիական զորքերի տարհանմանը, որով փաստացիորեն արձանագրվում էր թուրքական կողմի հաղթանակը: Պայմանագրով թուրքիան ստանում էր Կիլիկիայի հատվածը*, իսկ համաձայն պայմանագրի 7-րդ կետի՝ Ալեքսանդրետի սանջակում հատուկ վարչական ռեժիմ էր սահմանվում^{*}: Նշենք, որ այս հոդվածը թուրքական կողմը հետագայում հմտորեն օգտագործեց սանջակն իրեն միացնելու գործում [12]:

1924թ. դեկտեմբերի 5-ին Ալեքսանդրետի սանջակում ֆրանսիական գերագույն կոմիսար Վեյգանը հրապարակեց սանջակի կարգավիճակն էականորեն բարեկավող դեկրետ, որով այն դուրս բերվեց «Հայերի հանրապետությունից» և փոխանցվեց սիրիական կառավարությանը: Նշալ դեկրետի դրույթները հաստատվեցին 1924թ. դեկտեմբերի 31-ի Սիրիայի կառավարության հատուկ հրամանագրով: 1925թ. հունվարին արդեն նոր գերագույն կոմիսար Սարայը ևս մեկ քայլ արեց Ալեքսանդրետի սանջակի ինքնավարության ընդլայնման ուղղությամբ: սանջակի իշխանություններին վարչական և ֆինանսական ոլորտներում շնորհեցին լրացուցիչ զգալի լիազորությունների[13]:

Արհասարակ խոսելով ֆրանսիական պառուելսորատի հաստատմանը գուգահեռ Ալեքսանդրետի սանջակի ինքնավար միավորի ստեղծման նպատակահարմարության մասին՝ հարկ է նշել, որ պատմագիտական գրականության մեջ դրա վերաբերյալ տարրեր գնահատականներ են հնչեցվում: Մասնավորապես հաճախ կարծիք է հայտնվում, թե այն արհեստական միավոր էր և ոչ աշխարհագրական, ոչ էլ տնտեսական առումով դրա անհրաժեշտությունը չկար: Օրինակ՝ ակադեմիկոս Ա.Քայրամյանը նշում է. «Սանջակի ստեղծումը շրջանի ազգաբնակչության շահերի և ցանկությունների արտահայտումը չէր»[14]: Այն, բայց էլույան, ֆրանսիական իշխանությունների առաջին քայլերից էր, որն ուղղված էր Սիրիայում ֆրանսիական տիրապետության հարատև հաստատմանը: Ֆրանսիան այդ ամենը բողարկում էր այն լուսի ներքո, թե իբր իր ծերնարկած քայլերն ուղղված են ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանությանը, մինչդեռ դա փաստացիորեն «divide et impera» (բաժանիր, որ տիրեն) սկզբունքի կիրառման հաջողված փորձ էր: Ավելին՝ սանջակում հաստատված «հատուկ ռեժիմը» նույնական ուներ իր ետնանպատակները: Ֆրանսիական մանդատային իշխանություններն արհեստականորեն ստեղծեցին այն տպավորությունը, թե թուրք բնակչությունը կազմում է Ալեքսանդրետի շրջանի ողջ բնակչության 38 տոկոսը[15], ուստի պետք է առանձնահաստուկ կարգավիճակ ունենա: Մինչդեռ հիմնական խնդիրն անձևացված ժողովրդագրական հաշվարկներում էր [16]. սանջակի ազգաբնակչինների մեծամասնություն կազմող արաբական բնակչությունը բաժանվեց «արաբ-ալիկների, արաբ-սունիների, հույն-ուղղափառների, հույն-կաթոլիկների, մարոնիտների, ասորիների, քաղղեացիների, բողոքականների և այլ» համայնքների [17]: Իսկ ինչ վերաբերում է թուրք բնակչությանը (որն իրականում կազմում էր բնակչության 20 տոկոսը), ապա նրանց, միացնելով թուրքմեններին, թոքացած կամ թրքախոս այլ տարրերի, ստեղծեցին «թուրքական մեծ համայնք»: Ի դեպ, Ալեք-

* Հետագայում այս պայմանները հաստատվեցին 1923թ. կարգած Լոգամի համաժողովում:

** Պայմանագրի 7-րդ հոդվածում նշվում էր ֆրանսիական դեկավարության ներքո սանջակի տարածքում հատուկ վարչական ռեժիմի ստեղծման մասին, որը պետք է ապահովեր թուրքական համայնքի մշակութային ինքնավարությունը: Թուրքերենը, այդ փաստարդի բովանդակության հապատական, պետք է ստանար պաշտոնական լեզվի կարգավիճակ:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

սանդրետի սանջակում մեծ էր նաև հայերի թիվը, սակայն նրանց ևս մանդատային իշխանությունները բաժանեցին համայնքների՝ «հայ-լուսավորչական, հայ-կաթոլիկ, հայ-բողոքական»[18]: Այս մերոդաբանությամբ տեղական իշխանություններն արենս-տականորեն նվազեցնում էին արար մեծամասնության թիվը, և թուրք բնակչության համար ստեղծվում էր «լեգիտիմ հիմք», որը պիտի արդարացներ ընդունված «հասուլկ ռեժիմ»[19]:

Այսպիսով՝ սանջակի մանդատային իշխանությունները վարում էին պրոթուրքական քաղաքականություն, որն ուղղված էր Սիրիայի մասնատմանը և ուղեկցվում էր բացահայտ խորականության դրսորմամբ՝ մեծապես վնասելով Սիրիային և Ալեքսանդրետի շրջանում բնակվող արաբներին: Քաղաքական այս գիծն արտահայտվում էր ինչպես պետական պաշտոնների բաշխման և բյուջետային հատկացումների ժամանակ, այնպես էլ ծագկույթի և կրթության բնագավառներում[20]:

1936թ. իրավիճակը մանդատային կառավարման ներքո գտնվող տարածքների շուրջ սկսեց սրվել, երբ սեպտեմբերի 9-ին իրապարակվեց ֆրանս-սիրիական պայմանագիրը: Այս նախատեսում էր մանդատային կառավարության աստիճանական վերացում, որի արդյունքում Սիրիան ծերոք էր բերում լիակատար անկախություն: Թուրքիայի ԱԳՆ-ն դեմ արտահայտվեց՝ Ֆրանսիայից պահանջելով Ալեքսանդրետի սանջակի կառավարության հետ առանձին պայմանագիր կնքել, որը հետագայում կնշանակեր ներ յուրե ինքնիշխան պետության կարգավիճակի ճանաչում: Բոլոր նախկին համաձայնությունները, ըստ թուրքական կողմի, այս կամ այն չափով նախատեսում էին Ալեքսանդրետի սանջակի նկատմամբ պահպանել ֆինանսական խնամակալությունը[21]: Ֆրանսիական կառավարությունը, մերժելով Անկարայի պահանջները, ընդդեմ, որ Սիրիայի կազմում Ալեքսանդրետի սանջակի ինքնավարության մակարդակը լիովին բավարար է: 1936թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցան երկու պետությունների ներկայացուցիչների դիվանագիտական խորհրդատվություններ, որոնք անարդյունք պարտվեցին: Դիվանագիտական հայտագրերի փոխանակումները շարունակվեցին այնքան ժամանակ, մինչև Ֆրանսիան առաջարկեց Վեճի լուծումը վստահել Ազգերի լիգային: Այդ ընթացքում Սանջակում հուզումներ սկսվեցին: Թուրքական բնակչության հատկածում տեղի ունեցան ընդհարումներ տեղական ոստիկանության հետ: Զնայած միջազգային հանձնաժողովի դիտորդների ժամանակը՝ դրությունը սրվում էր, ընդ որում Թուրքիայում ուժադրություն էր ամեն գնով՝ «Սանջակի Վերամիավորմանը» հասնելու պահանջը [22]:

1936թ. դեկտեմբերի 27-ին Ազգային լիգայի խորհրդը Ֆրանսիայի և Թուրքիայի ներկայացուցիչների համաձայնությամբ որոշում ընդունեց Ալեքսանդրետի սանջակի կառավարման նոր վարչակարգի մասին: Այն նախատեսում էր գորքերի դուրսերում և Սանջակի տարածքում հասուլկ կամոնակարգի հաստատում: Համաձայն ընդունված որոշման՝ սիրիական կառավարությունը պահպանում էր վերահսկողությունը Սանջակի արտաքին հարաբերությունների, մաքսային ծառայության և ֆինանսական համակարգի նկատմամբ: Թուրքերնը տվյալ տարածքում ստանում էր պաշտոնական լեզվի կարգավիճակ*: Սանջակը պետք է ապահովագմականացվեր, իսկ նրա տարածքային ամբողջականությունը երաշխավորում էին Թուրքիան և Ֆրանսիան: Բացի այդ՝ Թուրքիային Սիրիայի և Ֆրանսիայի հետ հավասար իրավունք էր տրվում օգտվելու

* Ավելի ուշ կանոնադրության մեջ ներառվեցին դրույթներ, որոնք արաբերենին տալիս էին երկրորդ պաշտոնական լեզվի կարգավիճակ:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ալեքսանդրեսի նավահանգստից [23]: Ազելի ուշ՝ նոյն թվականի մայիսի 29-ին, Ազգերի լիգան հաստատեց Ալեքսանդրեսի սանջակի Սահմանադրությունը: Միաժամանակ, ժննում ստորագրեցին Սանջակի վերաբերյալ ֆրանս-թուրքական համաձայնագրեր, որոնք հետագայում թուրքիայի խորհրդարանը վավերացրեց: Թուրքիայի վարչապետ Ի.Ինենյուն այդ ժամանակ հայտարարեց, թե «իհմնախնդիրը» հաջողությամբ լուծվել է [24]:

1937թ. հոկտեմբերին Ազգերի լիգայի խորհրդական հավանություն տվեց Սանջակի տեղական օրենսդրական ժողովի ընտրությունների անցկացմանը, որոնք պետք է տեղի ունենային ազգային-կրոնական համայնքների համամասնական ներկայացուցական սկզբունքի հիման վրա [25]: Ընտրական օրենսդրության նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու և ընտրությունների ընթացքը վերահսկելու նպատակով ձևավորվեց հանձնաժողով՝ կազմված Ֆրանսիայի, Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի և Շվեյցարիայի ներկայացուցիչներից: Այնուհետև Ալեքսանդրեսի սանջակի Ազգային ժողովում ընտրություններ անցկացնելու կապակցությամբ թուրքական կառավարությունը մեղադրեց ֆրանսիական իշխանություններին և Ազգերի լիգայի դիստրիկտներին՝ Սանջակի թուրքական բնակչության «իրավունքների սահմանափակման» հարցում, իսկ թուրքական համայնքի տեղական ղեկավարները հրաժարվեցին մասնակցել ընտրություններին: Ֆրանսիական և սիրիական կողմից հետևեցին պատասխան մեղադրանքներ թուրքիային՝ այլ ազգային համայնքների վրա հարձակումների և անկարգություններ հրահրելու հետ կապված: 1938թ. գարնանը Սանջակում սկսվեցին զինված բախումներ թուրքերի և արաբների միջև[26]:

Այս ժամանակահատվածում ձևավորված իրավիճակի հանգուցալու ժամանամբ նպաստեցին Եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունները. մասնավորապես նացիստական Գերմանիայի կողմից Ավստրիայի զավթումը: Այդ լարված իրավիճակում Ֆրանսիան նպատակահարմար գտավ թուրքիայի հետ համաձայնության գալ թուրքական գործերը Սանջակ մունցելու հարցում, որից հետո՝ հուլիսի 5-ին, թուրքական գործերը մտան Սանջակ, ինչն էապես ազդեց օրենսդիր մարմնի ընտրությունների արդյունքների վրա[27]: Նոյն թվականի հուլիսի 22-ին Սանջակի տարածքում անցկացված տեղական օրենսդիր մարմնի ընտրությունների արդյունքում թուրքական համայնքի ներկայացուցիչներն օրենսդիր մարմնում գրադեցրին 40 տեղից 22-ը: 9 պատգամավորական մանդատ ստացավ ալառիական համայնքը [28], 5 հայկական համայնքը, 2-ական մանդատ ստացան հոյսների և արաբ-սունիների ներկայացուցիչները[29]: Օրենսդիր մարմինն առաջին իսկ նիստի ընթացքում որոշում ընդունեց Ալեքսանդրեսի սանջակը դուրս բերել Միջիայի կազմից և նրա տարածքի վրա հոչակել Հարայի Անկախ Հանրապետությունը: Նոր պետության գործադիր և օրենսդիր մարմինների կարևորագույն պաշտոններում ընտրվեցին թուրքական համայնքի ներկայացուցիչներ: Նորաստեղծ Հարայի Հանրապետության կառավարությունն ի սկզբանե չէր թաքցնում, որ իր վերջնանպատակը թուրքական պետության կազմ մտնելն է:

1939թ. Վերսալեցին նախկին Սանջակի հետագա ճակատագրի վերաբերյալ ֆրանս-թուրքական բանակցությունները, որոնք ընթանում էին նոր՝ երկրողմ պայմանագրի շուրջ: Գիտակցելով ֆրանսիական դիվանագիտության դիրքերի թուրքությունը՝ Անկարան առաջ քաշեց Ֆրանսիայի կողմից Հարայի Հանրապետության անկախության ճանաչման պահանջ: Հունիսի 23-ին Փարիզում վերջապես ստորագրվեց ֆրանս-թուրքական փոխօգնության մասին հոչակագիրը, որը նախատեսում էր երկու երկրնե-

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

րի համագործակցություն՝ երրորդ երկրի կողմից հարձակման դեպքում։ Նոյն օրը Անկարայում կնքվեց առանձին պայմանագիր նախկին Ալեքսանդրետի սանջակի խնդրի վերաբերյալ, որով ֆրանսիացիները ճանաչում էին Հարայի Հանրապետությունը, իսկ թուրքական իշխանությունը պարտավորվում էր ճանաչել Սիրիայի հետ նոր սահմանը և հետագայում հարգել Սիրիայի Հանրապետության տարածքային ամբողջականությունը [30]։ 1939թ. հուլիսին Հարայի Հանրապետության Ազգային ժողովը փաստացիորեն ձևական ընթացակարգով որոշում ընդունեց լուժարման և Թուրքիային միավորվելու մասին։ Քիչ ավելի ուշ թուրքական Հարայ գավառի վերածված նախկին Ալեքսանդրետի Սանջակի տարածքից դրւու հանվեցին ֆրանսիական գորքերը, իսկ իշխանության տեղական մարմինների համակարգը զիսավորեց Անկարայից նշանակվող նահանգապետոր։ Փաստացիորեն, Ալեքսանդրետի սանջակը մի շարք այլ տարածքների հետ միասին դարձավ Թուրքական պետության Հարայ գավառը։

1946թ. անկախացումից հետո էլ Սիրիան չհաշտվեց Թուրքիայի կողմից Սանջակի բրնակցման հետ և երկար տարիներ շարունակում էր մարզը քարտեզների վրա պատկերել իր կազմում [31], իսկ ներկայիս թուրք-սիրիական սահմանը դրանցում մերկայացվում էր որպես ժամանակավորի [32]։ Օրինակ թուրք-սիրիական հարաբերությունների հայտնի հետագուստող Դ. Փայիսը նշում է, որ «Առաջին դեպքը, երբ Դամասկոսը ստիպված էր սանջակը պատկերել Թուրքիայի կազմում, 1987թ. էր, երբ միջերկրածովյան մարզական խաղերն անցկացվում էին Սիրիայում, և Անկարան սպառնացել էր բոյկոտել խաղերը՝ Հարայի երկրամասն իր կազմում չպատկերելու դեպքում» [33]։ Չուզահեռաբար, անկախացումից ի վեր սիրիական իշխանությունները ՍՍԿ-ում իրենց ելույթներում պարբերաբար պահանջում էին սանջակը ետ վերադարձնել [34], քանի որ դա այդ տարիներին մամդատային կառավարման իրավակարգի խախտում էր [35]։ Սիաճամանակ Սիրիան իր հերթին փորձում էր հակաքայլեր ճեռնարկել Թուրքիայի դեմ։ Դամասկոսն աջակցում էր հակաքուրքական ահաբեկչական ուժերին և էթնիկ խմբավորումներին (քրուական), որպեսզի թուացնի կամ մասնատի Թուրքիան, ինչը հեռանկարում հնարավորություն կտար «քրնակցել Հարայի երկրամասը»։

Արդեն անկախացած Սիրիայի նոր ձևակարգած քաղաքական էլիտան իր պաշտոնավարման հենց սկզբից օրակարգային դարձրեց Ալեքսանդրետի սանջակի վերադարձի հարցը։ Սիրիայում ստեղծված Ալեքսանդրետի պաշտպանության կոմիտեն դիմեց Արարական պետությունների լիգա՝ գրաված արարական տարածքի հիմնախնդրի քննարկման նպատակով [36]։ Արարական երկրների աջակցությունը ստանալու նպատակով սիրիական կողմը պնդում էր, որ Ալեքսանդրետը Միջերկրածովյան շրջանում ռազմավարական նշանակության նավահանգիստ է արարական աշխարհի և հատկապես Սիրիայի ու Իրաքի համար։

1953թ. Սիրիայում խորհրդարանական ընտրությունների ընթացքում Ալեքսանդրետի սանջակի հարցը բուռն քննարկումների նոր ալիք բարձրացրեց։ Ընտրություններին մասնակցող մի շարք թեկնածուներ հայտարարում էին սանջակի Սիրիային միացման անհրաժեշտության մասին [37]։ 1955թ. բողոքի նոր ալիք բարձրացավ արդեն Հալեպի ուսանողության շրջանում, ովքեր հանդես էին գալիս սիրիական տարածքների վերադարձի օգտին։ Այս շրջանում թուրքական կողմն ուշի ուշով հետևում էր Սիրիայում սանջակի խնդրի վերաբերյալ հասարակական և քաղաքական էլիտայի շրջանակներում արվող հայտարարություններին՝ փորձելով հակաքայլեր մշակել։ 1955թ. թուրք-սիրիական բանակցությունների ընթացքում Թուրքիայի վարչապետ Ա. Մենդերեսը կարծիք հայտնեց, որ Թուրքիան իր հերթին ցավում է «Առաջին

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

աշխարհամարտի ընթացքում կորսված Հալեպ քաղաքի համար»[38]: Նմանօրինակ հայտարարությունը յուրահատուկ պատասխան էր՝ ուղղված սիրիական «տարածքային հավակնությունների» դեմ: Այս կերպ Թուրքիան փորձեց ցուց տալ, որ, եթե Սիրիան հաստատակամ է սանջակի նկատմամբ հավակնությունների հարցում, ապա իրենք նույնպես փոխադարձ հավակնությունների քաղաքական օրակարգ ունեն և պաշտպանվողի քաղաքական վարքագիծ չեն որդեգրի:

Սակայն հարկ է փաստել, որ, չնայած Ալեքսանդրեսի սանջակի հիմնահարցի կարևորությանը, այն միշտ չէ, որ եղել է սիրիական արտաքին քաղաքականության առաջին հորիզոնականուում: Դա կապված էր մի կողմից՝ տարածաշրջանային գործընթացների (20-րդ դարի 60-ականների վերջին 70-ականների սկզբին սիրիական քաղաքական օրակարգի առաջնային խնդիրը դարձավ 1967թ. Խորայի հետ պատերազմի հետևանքերի հաղթահարումը), մյուս կողմից՝ 1940-ականներից տարածաշրջանում մեզնարկած աշխարհաքաղաքական սուր փոխակերպումների ու մրցակցության հետ:

Սամագիտական գրականության մեջ ընդունված է, որ թուրք-սիրիական հարաբերենություններում նոր էջ բացվեց Սիրիայի նախագահ Ա.Զադիդի հեռացման և Հ.-Ասադի՝ քաղաքական ասպարեզ մուտքով: Սիրիական նոր ղեկավարության կողմից երկրի գարգացման ուղեգծերի որոշակիացման արդյունքում[39] թուրք-սիրիական հարաբերությունները սկսեցին քայլ առ քայլ փոխակերպվել: Որպես դրա դրսնորում՝ 1972թ. Թուրքիայի արտաքին գործերի նախարար <Բայուվենն այցելեց Դամասկոս և սիրիացի իր գործընկերոց Արդ Ալ-Հայմ Հաղդամի հետ քննարկեց երկվորմ հարաբերությունների ողջ օրակարգը, այդ քվում՝ առևտորի, տրանսպորտի և այլ ոլորտներում ապագա համագործակցության հնարավորությունները [40]:

20-րդ դարի 70-ականներից հետո Ալեքսանդրեսի հարցը թուրք-սիրիական հարաբերությունների օրակարգ վերադարձավ միայն 2000թ. հետո, երբ հարևան երկրները, հաղթահարելով քրդական հիմնախնդիր հետ կապված մի շարք երկվորմ ձգնաժամեր, 1998թ. Թուրքիայի Ձեյհան քաղաքում (Աղամայի նախանգ) կնքեցին համաձայնագիր, որը ենթադրում էր երկվորմ հարաբերություններում նվազագույնի հասնել «քրդական» գործոնի դերակատարումը՝ դրանից բխող անդրադարձերով [41]: Կողմերը պարտավորվում էին որևէ կերպ չօժանդակել որևէ կառուցի կամ էրնիկ խմբավորման, որը կարող էր ոչ կառուցողական դերակատարում ունենալ հարևան երկրի համար [42]: 1998թ. Վերոնշյալ իրադարձություն-ներից հետո երկվորմ հարաբերություններում որոշակի առաջընթաց գրանցվեց միայն 2000թ. Կեսերին: Մի շարք ՉԼՍ-ների կարծիքով՝ երկու երկրների միջև հարաբերություններում ջերմացման մասին վկայում էր Թուրքիայի նախագահ Ա.Սեգերի ներկայությունը <Ասադի հուղարկավորության արարողությամբ: Մասնավորապես, նշվում էր, «որ սիրիական ղեկավարությունը շատ զգացված էր Թուրքիայի կողմից նման բարձրաստիճան ներկայությամբ» [43]: Սիրիական կողմը գնահատեց Թուրքիայի այդ քայլը[44]:

Թուրք-սիրիական փոխադարձությունները նոր փուլ թևակոխեցին Թուրքիայում Ո.Էրդողանի գլխավորած Արդարություն և Զարգացում Կուսակցության (ԱԶԿ) իշխանության գլուխուց հետո: 2003թ. հունվարին Անվարա այցելեց Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ Աշ-Շարաան: Այցի կարևորության մասին էր վկայում այն, որ Սիրիայի արտգործնախարարը չանդրադարձավ երկու երկրների տարածքային վեճերին[45], ինչը լավատեսություն էր ներշնչում թուրք-սիրիական հարաբերությունների հետագա զարգացման մատուցում: Թուրքիան գոհ էր, որ Սիրիան խստորեն հետևում էր 1998թ. հոկտեմբերի հայտնի ձգնաժամից հետո ստորագրված Ձեյհանի համաձայնագրին:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ձուգահեռաբար թուրք-սիրիական հարաբերությունների զարգացման դիմամիկայի վերաբերյալ իր գոհունակությունն էր հայտնում նաև Սիրիայի նախագահ Բ.Ասադը, որը լիբանանյան «Աս-Սաֆիրե» թերթին տրված հարցագրույցում նշում էր, որ թուրք-սիրիական փոխհարաբերությունները «գտնվում են բարձր մակարդակի վրա», իսկ Թուրքիայի վարչապետ Ա.Գյուլի վերջին այցը Ղամասկու «զարկ է տվել դրանց զարգացմանը»[46]:

2004թ. Սիրիայի անկախության հրչակումից ի վեր առաջին անգամ Սիրիայի նախագահը պաշտոնական այցով մեկնեց Անկարա: Ոյորտի մասնագետները Ասադի այցը բնութագրեցին որպես Սիրիայի և Թուրքիայի միջև հիմնական խնդիրները վերջնականապես հանգուցապութելու փորձ: «Այս այցը շատ կարևոր է մեզ համար, քանի որ առաջին անգամ Թուրքիա է այցելում Սիրիայի նախագահը: Համոզված եմ, որ այցը նոր էջ կրացի թուրք-սիրիական հարաբերություններում», - հայտարարեց Թուրքիայի արտգործնախարար և փոխվարչապետ Ա.Գյուլը[47]: Հիշատակման է արժանի նաև այն, որ Թուրքիա կատարվելիք այցի նախօրենին Հ.Ասադը, հարցագրույց տալով CNN-Turk հեռուստապետին[48], հայտարարեց, թե Իրաքում քրդական կամ էթնիկ հիմքով ցանկացած այլ տիպի միավորի կազմավորումն անընդունելի է՝ բնութագրելով դա որպես «կարծիր գժի» խախտում: Դիրքորոշում, որը նույնական էր թուրքական մոտեցման հետ: Միաժամանակ, Թուրքիայում լրագրողներին հետ հարցագրույցում Սիրիայի նախագահը կողմ արտահայտվեց Թուրքիայի ԵՄ անդամակցության շուրջ[49]: Ասադն ընդունեց Թուրքիայի հետ սահմանային խնդիր արկայությունն Ալեքսանդրես-Խսքենդերուն նահանգի մասով, սակայն միաժամանակ ընդգծեց, որ հարաբերությունների ամրապնդումը «պետք է սկսել այն ամենից, ինչը միավորում է Երկու Երկրներին»: Նրա կարծիքով սահմանային տարածայմությունները «կվարդավորվեին հետագայում՝ փոխադարձ շահերի հիմքով» [50]: Ի դեպք Ասադի այցից դեռ մեկ տարի առաջ Սիրիայում տպագրված քարտեզներում Հաթայը ներկված էր միևնույն գույնով, որով ներկված էր Թուրքիայի տարածքը: Դա վկայում էր տարածքային հիմնախնդիրներում սիրիական իշխանությունների քաղաքականության փոփոխության մասին[51]:

2005թ. Սիրիայի և Թուրքիայի արտգործնախարարությունները ձեռնամուխ եղան թուրքական Հաթայ նահանգի շրջանի վիճելի սահմանային տարածքների խնդրի կարգավորմանը [52], որով գրադարձություն էր ծևականացնելու համատեղ հանձնաժողովը*: Հարկ է մշել, որ նման դժվար լուծելի հիմնախնդրի վերաբերյալ միայն բանակցությունների գործընթացի առկայությունն արդեն վկայում էր այն մասին, որ Երկողմ հարաբերությունների ցավոտ խնդիրներից ևս մեկը կարող էր օրակարգից հանվել մոտ ապագայում: Վերոնշյալը, բնականարար, ենթադրում էր, որ Սիրիան փաստացիորեն համակերպվել է սանջակի կորստի հետ և որպես գերակայություն իր համար ընտրել է հարաբերությունների բարելավումը հյուսիսային հարևանի հետ՝ դրանից բխող քաղաքական, տնտեսական և այլ օգուտներով:

Սակայն իրավիճակը 21-րդ դարի առաջին տասնամյակում լիովին փոխվեց՝ փոխելով ջերմացման միտումներ արձանագրող Երկու Երկրների հարաբերությունները: 2010-11թթ. քաղաքացիական բախումները Սիրիայում և Թուրքիայի աջակցությունը սիրիական հակակառավարական ուժերին և Սիրիայում գործող ահաբեկչական

* Խոսքն այն սահմանային տարածքների մասին է, որոնք մինչև 1939թ. գտնվում էին Սիրիայի և Թուրքիայի քաղաքացիների նախավոր տնօրինության տակ: Երկու կողմերի հողատերերը կորցրին իրենց սեփականությունն այն բանից հետո, եթե Խսքենդերուն նահանգն անցավ Թուրքիային, և Երկու Երկրների միջև սահմանները փոփոխված ենթարկվեցին:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

խմբավորումներին, ինչպես նաև սահմանափակ թվով ռազմական ներկայությունը սիրիական հյուսիսային տարածքներում, պարզորոշ ցույց տվեցին, որ կայուն և զարգացած Սիրիան թուրքական կողմին ամենական շահեկան չէ, ուստի թուրքական ներկա «փլամինիստներն» ամեն ջանք գործադրում են գլխատելու համար Սիրիան՝ այն դարձնելով անինքնիշխան և թույլ: Իսկ երբեմնի Ալեքսանդրետի սանջակի հիմնահարցը Սերժավոր արևելյան ներկա քաղաքական օրակարգում չունի արդիականություն, քանի որ տարածաշրջանը գտնվում է լիովին նոր տրամարանություն ենթադրող զարգացումների և տարածքային վերաբաշխումների շեմին, որոնց արդյունքում կարող են ստեղծվել նոր երկներ, և մասնաւուն հները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որպես Վարչատարածքային միավորի բաժանման հիմք դիտվում էր փաշալիկի (արար. «Վիլայեթ») նահանգի սկզբունքը: *Տե՛ս Կարապետյան Ռ., Արաբական Երկրների նոր և նորագույն պատմություն, Եր., 2003, էջ 11; Հովհաննիսյան Ն., Արաբական Երկրների պատմություն, հատոր 2, Եր., 2007, էջ 74:*
2. Գրոմիկո Ա.Ա. և դր., “История дипломатии”, дипломатия на первом этапе общего кризиса капиталистической системы, 2-е изд.: под ред., Т. 3, М., 1965, стр. 26.
3. *Տե՛ս Asie Française, Numéro 13; Paris, 1930:17:*
4. *Տե՛ս The Sanjak of Alexandrette: A Forgotten Syrian Territory, Al-Zawba'ah: Issue 9; vol. 2; November 1998, pp. 4-5. <http://ssnp.net/content/view/828/>:*
5. *Տե՛ս Ա.Ա.Բայրամյան, Ալեքսանդրետի սանջարի իրավական ստատուսը և քաղաքական խմբավորումները: 1920-1930-ական թվականներ, ՀՍՍՀ գԱ Տեղեկագիր հն. 12, 1964, էջ 18:*
6. *Տե՛ս Կարապետյան Ռ., նշվ. աշխ. էջ 106-113:*
7. *Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական Երկրների նկատմամբ Թուրքիայի տարածքային հավակնությունները նորագույն շրջանում // Սերժավոր Արևելքի և Միջին Արևելքի Երկրներ և ժողովուրդներ, հոդվածների ժողովածու, հատոր 23, Եր., 2004, էջ 159-160:*
8. *Տե՛ս Ագաճանյան Մ., Ալեքսադրետսկий Санджак: потерянная родина армян, Нораванк Имнадрам, 17.05.2007, www.noravank.am, ст. 2.*
9. *Տե՛ս Recueil des Actes Diplomatiques en vigueur dans les Etats du Levant sous Mandat français. Beyrouth, 1935: p. 195:*
10. *Տե՛ս Arménag Aprahamian, Le Sanjak d'Alexandrette, 2008, p. 23:*
11. *Տե՛ս Սաակյան, Պ. Գ. (1984) Анкарский договор 1921 года и судьба киликийских армян. Պատմա-քանասիրական հանդես, հ. 2 . 1984-2(132), стр. 132:*
12. *Հարկ է նշել, որ Անկարայի պայմանագիրն ուներ նաև գաղտնի նաս, որը վերաբերում էր Ֆրանս-թուրքական շփումների ռազմական բաղադրիչին: Մասնավորապես՝ Ֆրանսիան պարտավորվում էր Թուրքիային վաճառել մոտ 200 մլն ֆրանկ ընդհանուր արժողությամբ գինամթերք: Տե՛ս Սաակյան, Պ. Գ., նշվ. աշխ., стр. 135:*
13. *Տե՛ս Սագիմբաև Ա.Վ. Проблема Александретского санджака в контексте определения границ подмандатных территорий (1921-1939гг.). Брянский государственный университет, стр. 2:*
14. *Տե՛ս Ա.Ա.Բայրամյան, նշվ.աշխ., էջ 137:*
15. *Տե՛ս Le Conflit d'Alexandrette et la Societe des Nations, Damas, 1949, p. 5.*
16. *Տե՛ս Ա.Ա.Բայրամյան, նշվ.աշխ., էջ 138:*

ՄԵՐՐՈԴ ՄԱՀԾՏՎԵ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԽՈՏՏՈՒ 2015

17. Նոյն տեղում:
18. 1936թ. անցկացված մարդահամարի պաշտոնական տվյալներով սանջակի 225.000 բնակչությունը բաժանվում էր ազգային դավանական խմբերի. թուրքեր - 85.242, 38 տոկոսը, ալի-արաբներ - 62.026, 27 տոկոս, սուննի-արաբներ - 22.161, 10 տոկոսը, հայեր - 28.857, 13 տոկոս, հոյն-ուղղակառ և այլ քրիստոնիաներ - 21.371, 9 տոկոս, քրիստոնեացիներ, հրեաներ, և այլն - 951, 2,5-3 տոկոսը: *St'u Uğur Kaya, Dilek Yankaya, "Les relations de la Turquie avec la Syrie"*, Istanbul, 2013, էջ 4:
19. St'u Jacquot Paul, Antioche. Tome I.Beyrouth, 1931, 31, Véou, Paul de Le Désastre d'Alexan drette, Paris. 1938: pp. 42-74:
20. St'u Arménag Aprahamian, նշվ.աշխ., թ. 11:
21. St'u Հայրամեան Ա.Ա., Ալեքսանդրէթի սանձակի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1918-1939. Լիբանան, 1999, էջ 110-126:
22. Ագաճանյան Մ., նշվ. աշխ., թ. 3:
23. Գրոմիկո Ա.Ա., նշվ.աշխ., թ. 701:
24. Պայրամեան Ա.Ա., նշվ.աշխ., էջ 161:
25. Ագաճանյան Մ., նշվ.աշխ., թ. 3:
26. Կարճ ժամանակահատվածում թուրքական բնակչության թիվը կտրուկ աճեց՝ 40%-ից հասնելով 60%-ի (St'u Պայրամեան Ա.Ա., նշվ.աշխ., էջ 168):
27. Իսլամական կրոնական ուղղություն, Ճյուղավորում կամ աղանդ, որը, ըստ ուղղութի մասնագետների, ավելի շատ հարում է շիականությանը:
28. Ագաճանյան Մ., նշվ.աշխ., թ. 5.
30. Նոյն տեղում:
 31. Uğur Kaya, Dilek Yankaya, նշվ.աշխ., թ. 14:
 32. St'u Olaylarla Türk Diş Politikası. Ankara 1990, թ. 619-620, Ահմեդօվ Բ.- Պրотивостояние: Сирия- Турция // Журнал Азия и Африка сегодня, N 1, 2000, p. 12
 33. Daniel Pipes, The Greater Syria: The History of An Ambition, New York, 1990, p.141.
 34. Daniel Pipes, Syria Beyond The Peace Process, Washington, 1996, p. 54.
 35. Պաշտոնական Ղամասկոսի պահանջատիրությունն արդարացված էր, քանի որ մանդատային իշխանությունները՝ (տվյալ դեպքում Ֆրանսիան) մանդատային խարտիայի չորրորդ հոդվածի համաձայն, պարտավորվում էր հետևել, որպեսզի Սիրիային և Լիբանանին պատկանող և ոչ մի տարածք չշնորհվի երրորդ կողմի, այդ թվում և Վարծակալության հիմունքներով, ինչպես նաև չդրվի երրորդ կողմի վերահսկողության տակե (St'u Melhem E., The Sanjak of Alexandretta: A Forgotten Syrian Territory, <http://ssnp.net/content/view/828/>)
 36. St'u Sanjian A. The Sanjak of Alexandretta(Hatay). Its impact on Turkish-Syrian relations (1939-56), The Middle East Journal., vol 10, 1956, pp. 382-383.
 37. Մամուլում ակտիվորեն քննարկվում էր ոչ միայն Ալեքսանդրետի, այլև Տավոսի լեռների շրջակայթում գտնվող որոշ տարածքների միացման խնդիրը: St'u Daniel Pipes, նշվ. աշխ. pp. 97-98.
 38. Նոյն տեղում:
 39. Григорян Г.М. Позиция Сирии в ближневосточном конфликте. Еր., 1989, стр. 158-159; Сирийская Арабская Республика (Институт Ближнего Востока). Отв. Ред. В.М. Ахмедов, В.А. Исаев, А.О. Филоник. М., 1997, стр. 160

ՄԵՐՐՈԴ ՄԱՀԾՈՅՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՏՏՈՒ 2015

40. 1974-1975թ. ընթացքում արտգործնախարարները ևս մի քանի անգամ հանդիպումներ ունեցան Երկու Երկրների մայրաքաղաքներում: Այս տարիներին թուրքական շփումների օրակարգ վերադարձավ Ալեքսանդրեսի սանջակի հիմնախնդիրը, որը պատճառ էր հանդիսացել, որ Երկու Երկրների տարածքների սխալ բաժանման հետևանքով բազում սիրիացի զուղացիների հողատարածքներ մնացին Թուրքիայի տարածքում և հակառակը: Հետագա տարիների ընթացքում սիրիացի և թուրք զյուղացիները ստիպված էին անօրինաբար հատելու պետական սահմանը, ինչը հաճախ վերաճում էր թուրք և սիրիացի սահմանապահների բախումների: Խնդիրը սակայն դիվանագիտական շփումների արդյունքում լուծում չստացավ, ավելին այն պատճառ հանդիսացավ հարաբերությունների հերթական սրման համար:
41. Türk Diş Politikası. Cilt 2, İstanbul 2002, стр. 565; Ахмедов. В.М. Сирийско-турецкое противостояние и курдский вопрос// сб. Статей “Ближний Восток и Современность”, вып. 7, М., 1999, стр.20; Mahmut Bali Aykan. The Turkish-Syrian Crisis of October 1998: The Turkish View// Middle East Policy, N 4, Volume 6, June 1999, p. 174; Ахмедов В.М. Сирия при Башаре Асаде. Региональный опыт модернизации в условиях внешней нестабильности. М., 2005, стр. 144.
42. Սիրիան, վիխաղարձության սկզբունքով, արգելում էր իր տարածքից Թուրքիայի նկատմամբ ծավալվող ցանկացած գործունեություն, պարտավորվում էր կասեցնել ցանկացած օժանդակություն և իր տարածքում ՔԲԿ-ի ազիտացին գործունեությունը, ընդունում էր ՔԲԿ-ն որպես ահաբեկչական կազմակերպություն, արգելում էր ՔԲԿ-ի անդամներին՝ օգտագործել իր տարածքը Երրորդ Երկրներ անցնելու համար, պետք է ծերոնարեր բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ՔԲԿ-ի ղեկավարի մուտքը Սիրիա բացառելու համար (Առավել մանրամասն տես Ахмедов В.М. նշվ.աշխ, стр. 20) Ըստ որոշ չիաստատաված տեղեկությունների՝ հանդիպման ժամանակ կնքվել են նաև մի շարք այլ գաղտնի համաձայնագրեր, որոնք, սակայն, չեն իրապարակվել (Sté u Robert Olson. Turkey's Relations with Iran, Syria, Israel and Russia, 1991-2000: the Kurdish and Islamist Questions// Mazda Publishers, Costa Mesa (California), 2001; The Kurdish Question and Geostrategic Changes in the Middle East after the Gulf War// Journal of South Asian and Middle Eastern Studies, № 4, Volume 17, Summer 1994 p.114)
43. Карапетян Р. Новые тенденции в развитии турецко-сирийских отношений// Тюркологические и османоведческие исследования, Ереван- 2003, аль-Заман – 08.09.2000, Jerusalem Post -29.10.2000
44. Սիրիայի համար դա կարևոր էր, քանի որ նախագահ ընտրվելուց հետո Ա. Սեգերը, հակառակ բոլոր դիվանագիտական կանոններին, իր առաջին այցը կատարեց Սիրիա հենց Հ.Ասադի հուղարկավորությանը ներկա գտնվելու նպատակով: Սասնագետներն ընդգծում էին Ա. Սեգերի դերը Սիրիայի հետ հարաբերությունների սերտացման գործում նաև հետագա տարիներին. Stü Radikal -08.01.2004
45. Turkish Daily News-27.02.2003
46. Ac-Cafigir -26.03.2003
47. РИА Новости- 06.01.2004
48. Syrian president makes landmark Turkey trip, Tuesday, January 6, 2004 Posted: 1618 GMT (12:18 AM HKT), <http://edition.cnn.com/2004/WORLD/meast/01/06/turkey.syria.reut/>
49. Пульс планеты - 06.01.2004
50. Նոյյն տեղում
51. Milliyet-17.01.2003
52. РИА Новости – 13.06.2005

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ալեքսանդրետի սանջակի հիմնախնդիրը որպես թուրք-սիրիական
հարաբերությունների վրա ազդող պատմական գործոն
Արսեն Զուլֆալակյան

Հոդվածը նվիրված է Մերձավոր Արևելքում երկու հզոր երկրների՝ Թուրքիայի և Սիրիայի պատմական հարաբերությունների տարածքային բաղադրիչի՝ Ալեքսանդրետի սանջակի հիմնահարցի հետազոտմանը: Այս խնդիրն իրենով տարիներ շարունակ պայմանավորել է սիրիաթուրքական հարաբերությունների օրակարգը, ինչպես նաև հանդիսացել մի շարք գերտերությունների՝ Ֆրանսիայի, Անգլիայի տարածաշրջանին քաղաքականության առանցքային օդակի, միջազգային կազմակերպությունների՝ Ազգերի Լիգայի քննարկման կարևոր հիմնախնդիր, տարածաշրջանում ուժային հարաբերակցության փոփոխման կարևոր գործոն: Հոդվածում դիտարկվում է պատմական իրադարձությունների ողջ շղթան, որը պայմանավորել է Ալեքսանդրետի սանջակի նկատմամբ հավակնությունների միջազգային պատմական ասպեկտները, ինչպես նաև հետագայում նրա թուրքիային միանալու գործընթացը:

Բանալի բառեր՝ թուրք-սիրիական հարաբերություններ, Ալեքսանդրետի սանջակ, մանդատային իշխանություն, Թուրքիա, Սիրիա, Մերձավոր Արևելք:

РЕЗЮМЕ

Проблема Александреттского санджака как исторический фактор, влияющий на турецко-сирийские отношения
Арсен Джулфалакян

Статья посвящена изучению вопроса Александреттского санджака, который является территориальной составляющей исторических отношений Турции и Сирии – двух могущественных стран на Ближнем Востоке. Этот вопрос многие годы определял повестку турецко-сирийских политических отношений. Он также являлся ключевым вопросом региональной политики сверхдержав того периода, в частности Франции и Великобритании, обсуждался в Лиги Наций, а также являлся важным фактором поддерживания баланса сил в регионе.

В статье рассматривается весь цикл исторических событий, определивших международные претензии по отношению к Александреттскому санджаку с исторической точки зрения, а также последующий процесс его присоединения к Турции.

Ключевые слова: турецко-сирийские отношения, Александреттский санджак, мандатная власть, Турция, Сирия, Ближний Восток.

SUMMARY

**The Problem of the Sanjak of Alexandretta as a Historical Factor
Impacting Turkish-Syrian Relations
Arsen Julfalakyan**

The aim of this article is to examine the territorial issue of the Sanjak of Alexandretta within the context of the two powerful countries in the Middle East -Turkish-Syrian historical relations. For many years Turkish-Syrian bilateral political agenda has been conditioned by this issue. It was also an essential component of the regional policy of then great powers, particularly France and Great Britain. It was on the agenda of the League of Nations as an issue of great importance. It also served as a significant factor for charging the balance of power in the region.

This article observes the whole chain of the historical events that was decisive for the international claims on the Sanjak of Alexandretta from historical perspective. The article also discusses the processes of the attachment thereof to Turkey.

Keywords: *Turkish-Syrian relations, the Sanjak of Alexandretta, mandatory power, Turkey, Syria, the Middle East*